ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 2 (7), 1941 թ. Երևան

ԱՍ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՍԵՎ ՋՐԻ (ՄԵԾԱՄՈՐԻ) ՍՏՈՐԻՆ ՀՈՍԱՆՔԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԿԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Երասխի ձախակողմյան վտակները, որոնք սկիզբ են առնում Վանանդի (Կարսի շրջանի), Զըլդրի, Արագածի, Գեղամա ու Վայոց Ձորի (Միկոյանի) շրջանների լեռնային բարձունքներից և անցնում Այրարատյան դաշտավայրի միջով, իրենց ստորին հոսանքներում երբեմն ենթակա են եղել ընթացքի փոփոխության։ Գարնան հորդառատ անձրևների և լեռների վրա կուտակված ձյան հալվելու հետևանքով այդ վտակները, ամենահին ժամանակներից սկսած, ահագին քանակությամբ ավազ, տիղմ և խճակույտեր են թափել լեռներից դեպի Այրարատյան հարթությունը, որոնք այս ու այն վայրում կուտակվելով՝ շատ անգամ արգելք են հանդիսացել հոսող ջրերի սովորական ընթացքին։ Այրարատյան դաշտի հողի վերին շերտերի փխրուն, ավազախառն և զանազան աղուտներով հարուստ լինելու հանգամանքը նույնպես նպաստել է դետերի հոսանքների որոշ փոփոխության։ Սակայն այդ նույն դետերից դաշտերի ոռոգման համար հանած ջրանցքների շնորհիվ ջրերի հոսանքների ուժգնության թափը ստորին մասերում բավական թուլացել է։

Այդ տեսակետից բացառություն չի կազմել և Երասխը. Այրարատյան դաշտավայրում նրա հոսանքն ևս ենթակա է եղել զանազան ուղղությամբ փոփոխություններին, որոնց մասին հիշատակություններ կան պատմագրական աղբյուրներում. այսպես՝ Մ. Խորենացին հայտնում է, թե «Երվանդ թագավորի ժամանակ արքունիքը փոխադրվում է Արմավիր կոչված բլրից, որովհետև Երասխ գետը հեռացել էր և երբ ձմեռը երկարատև էր լինում և հյուսիսային քամիներն էին փչում, վտակը սառչում էր և ջուրը բավական չէր լինում արքունական պետքերի համար, որից Երվանդը նեղվելով և ավելի ամուր տեղ որոնելով՝ արքունիքը փոխադրում է դեպի արևմտյան կողմը մի քարակտուր բլրի վրա, որի շուրջը պտույտ գործելով Երասխը՝ Ախուրյան գետի դեմն է հոսում» (Մ. Խ., Բ գիրք, Լթ. գլ., էջ 109, Թփղիս, 1913 թ.)։ Այստեղից պարզ երևում է, որ Արմավիրի շրջանում Երասխի հոսանքը թեքել է դեպի իր աջ ափը. և իսկապես, մինչև այժմ էլ Արմավիրից դեպի արևելք, Երասխի ձախ ափի ուղղությամբ նկատելի են Երասխի հին հունի հետքեր, որ տեղացիները կոչում են «Ղուրու Արազ» (Չոր Արազ). նշանակում է՝ Երասխն այս շրջանում թեքվել է դեպի հարավ, իր աջ ափի կողմը։

Տարբեր թեքում է ստացել Երասխը՝ սկսած Մարգարա գյուղի շրջանից մինչև Նախիջևանի մոտերքը. այս տարածության վրա նրա հոսանքն ավելի թեքվել է դեպի ձախ ափի կողմը։ Գարնան հորդացումից Երասխի ջրերը ողողում են Մարգարա գյուղի այգիներն ու ցանքերը, որոնք տարածվում են Երասխի ձախ ափին, ավելի ներքև՝ Նոր Վիրապի բլուրը, որ դարեր առաջ որոշ չափով զատված էր Երասխից, ներկայումս երեք կողմից ծածկվում է նրա ջրերով, երբ նա հորդանում է։ Այդ մասին կողմնակի տեղեկություններ է տալիս և Ղազար Փարպեցին. 480-ական թվականների դեպքերի կապակցությամբ նա ասում է, թե երբ Վահան Մամիկոնյանը Նիխորի հետ տեսակցելուց հետո Արտազ գավառից վերադառնում է դեպի Դվին, տեսնում է Արտաշատի մոտ Երասխի վրայի կամուրջը ջրի հոսանքից քանդված (Ղ. Փարպեցի, էջ 377, Թիֆլիս, 1908 թ.). այդ կամուրջը հայտնի է Տափարականի կամուրջ անունով և շինված էր Երասխ գետի վրա՝ Արտաշատ քաղաքի դռներից մեկի մոտ. նա կարող էր քանդվել ջրի հոսանքից, եթե Երասխի ընթացքն այդ կետում թեքվեր դեպի իր ձախ ափը և ողողեր Արտաշատի դռներն ու պարիսպները։ Բացի այդ բոլորից՝ նախկին Սուրմալու գավառում (Երասխի աջակողմյան շրջանում) նմանապես նկատելի է գետի նախկին հուն, որ տեղացիները դարձյալ անվանում են «Ղուր Արազ», որից կարելի է եզրակացնել, թե դարերի ընթացքում Երասխը Սուրմալուի և Ղամարլուի միջև ընկած տարածության վրա իր հոսանքն ուղղելով ավելի դեպի իր ձախակողմյան ափերը, նախկին հունը, որ Արտաշատից դեպի հարավ էր ընկնում, զրկվել էր Երասխի ջրից։

Երասխի և նրա վտակների հոսանքների ուղղության փոփոխության վրա, անշուշտ, որոշ ազդեցություն են ունեցել նաև Այրարատյան դաշտավայրում և վերջինս շրջապատող լեռնաշխարհում հաճախակի կրկնվող երկրաշարժները, որոնցից ավելի շատ մանրամասն տեղեկություն ունենք 1840 թ. հունիսի 20-ին Մեծ Մասիսի և նրա շրջանում տեղի ունեցած երկրաշարժի մասին, որի ազդեցությունից Երասխի ջրերը բարձրանալով՝ դուրս են գալիս իրենց ափերից և զանազան հոսանքներ կազմելով՝ մոտ 160 կիլոմետր տարածության վրա 6000-ից ավելի տներ են ավերում։

Այրարատյան դաշտի ռոզման տեսակետից պատմական շրջանում մեծ նշանակություն է ունեցել Երասխի և նրա, գլխավորապես, ձախակողմյան վտակների հոսանքների ուղղությունը—ներկա դեպքում այդ վտակներից քննության առարկա պիտի լինի Սև-ջրի կամ Մեծամորի ստորին հոսանքի խնդիրը, որի մասին պատմական մի քանի դեպքերի կապակցությամբ տեղեկություններ են հաղորդում հայ պատմագիրները։

Մեծամորը կամ Սև-ջուրը, որ պատմական զանազան շրջաններում կոչվել է նաև Շամբի-ջուր և Գարա-սու, սկիզբ է առնում Արագածի ստորոտի Այղր լճից. առաջին անգամ այդ գետի անունը հիշատակվում է Արտաշատ մայրաքաղաքի շինության կապակցությամբ, 166 թ. մեր թվականությունից առաջ։ Հույն և հայ պատմագիրների ու աշխարհագիրների վկայությամբ՝ Հայաստանի Արտաշիսյան հարստության հիմնադիր Արտաշեսն իր նոր մայրաքաղաք Արտաշատը հիմնել է Արաքսի ձախ ափին, Ստրաբոնի վկայությամբ՝ այն տեղում, ուր Երասխ գետը պտույտ է կազ-

մում՝ առաջ բերելով ցամաքակղզի (Ստրաբոն, Աշխարհագրություն, XI դ.)։ Մ. Խորենացին ցանկանալով ավելի ճշտել Արտաշատի շինության վայրը, հայանում է, թե «Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են և հավանելով բլուրը՝ շինում է [այնտեղ] իր անունով Արտաշատ քաղաքը» (Բ. գիրք, ԽԹ. գլ., Տփղ., 1913 թ.)։ Նույն տեղեկությունը Մ. Խորենացուց վերցնելով, բառացի կերպով կրկնում է 13-րդ դարի պատմիչ Վարդան վ. (էջ 51, Մոսկվա, 1861 թ.)։ Այսպիսով, Երասխի և Մեծամորի հոսանքներն իրար խառնվելու հետևանքով միայն Արտաշատ մայրաքաղաքի շինության վայրը թերակղզի էր ներկայացնում, որը մի նեղ պարանոցով միանում էր ցամաքի հետ, իսկ քաղաքի այդ մասն էլ ամրացվում է խրամով և պատնեշով։

Սակայն Մեծամորը (Սև-ջուրը) ներկայումս հին Արտաշատի կամ Խոր Վիրապի շրջանից բավական հեռու, արևմտյան կողմում է խառնվում Երասխին, ուր չէր կարող շինված լինել Արտաշատ մայրաքաղաքը. հետևապես՝ հարց է առաջանում, թե մեր թվականությունից մոտ երկու դար առաջ Մեծամորն իրոք հասնում էր Դվինի և Խոր Վիրապի շրջանները, թե՞ մեր պատմագրության մեջ Երասխի այդ մասի ձախակողմյան վտակների անունների մեջ շփոթություն է առաջացել։ Բանասիրության մեջ այդ խնդիրը մինչև այժմ լուրջ քննության առարկա չի եղել. բանասերներից ոմանք Մեծամորի (Սև-ջրի) հոսանքի ներկա վիճակից ելնելով՝ այն անհիմն կարծիքն են հայտնել, թե Մեծամորը չէր կարող Արտաշատ մայրաքաղաքի մոտ հասնել, հետևապես Մ. Խորենացին շփոթել է Մեծամորը Աղատ (Գառնի) գետի հետ և կամ Մեծամորի անվան հիշատակությունը ներկա դեպքում թյուրիմացություն կարող է լինել միայն։ Սակայն խնդիրն այստեղ Մ. Խորենացու տեղեկությամբ չի սահմանափակվում. Փ. Բյուզանդը Խոսրով Կոտակ թագավորի մասին խոսելով՝ հայտնում է, թե նա անտառ է տնկել տալիս Գառնի արքունի բերդից սկսած «մինչև Մեծամորի դաշտը, մինչև այն բլուրը, որ կոչվում է Դվին, որը գտնվում է մեծ Արտաշատ քաղաքի հյուսիսային կողմում» (Փ. Բյուզանդ, Դ. 8 գլ.). այստեղից կարելի է եզրակացնել, որ Մեծամորի հոսանքն այդ ժամանակ (մեր թվականության 4-րդ դարում) հասնում էր մինչև Դվինի շրջանը, Արտաշատի հյուսիսային կողմը, որի համար էլ Դվինի դաշտը կոչվել է Մեծամորի անունով։ Որոշ տեղեկություն է պահպանվել նաև այն մասին, որ Արտաշատի մոտ Մեծամոր գետի վրա շինված է եղել կամուրջ, որը զանազան անուններով է կոչվել, ինչպես Մեծամորի, Արտաշատի կամ Վաղարշապատի կամուրջ անուններով։ Ագաթանգեղոսը խոսելով հայոց Խոսրով թագավորին սպանող Անակին հետապնդելու մասին, հայտնում է, թե հետապնդողները «ցամաքով շտապում էին հասնել Արտաշատ քաղաքի դռների մոտ գտնված կամուրջներին. որովհետև Երասխ գետը հորդացած... դարիվ դարիվ հոսում էր»... հետապնդողների «մի մասը անցնելով Վաղարշապատ քաղաքի կամուրջով, որին Մեծամոր էլ էին ասում, շտապում էին (ավելի) առաջ հասնել Արտաշատի կամուրջների ծայրին»... (Ագաթանգեղոս, էջ 28, Թիֆլիս, 1914 թ.)։ Մեծամորի վրայի կամուրջը, որ Մ. Խորենացին պարզապես անվանում է Արտաշատի կամուրջ (Մ. Խոր., Բ. գիրք, 61 գլ.)՝ այդ քաղաքի դռների

մոտ շինված լինելու պատճառով, իսկ Ագաթանգեղոսը կոչում է Վաղարշապատի կամուրջ՝ Արտաշատից դեպի Վաղարշապատ ընկած ճանապարհի համար, Վարդան պատմիչը որոշակի կերպով անվանում է Մեծամորի կամուրջ. այսպես Մ. Խորենացին Արտավազդ Բ-ի մասին խոսելով՝ հայտնում է, թե նա «անցնելով Արտաշատ քաղաքի մոտի կամուրջով Գինա (գետի) ակունքներում վայրի խոզեր և վայրի էշեր որսալու համար, ընկնում է մեծ խորխորատի մեջ» (Մ. Խոր., Բ. գիրք, 61 գլ.)։ Վարդան պատմիչը, անշուշտ, այս դեպքում օգտվելով Մ. Խորենացուց, նույն Արտավազդի մասին գրում է, թե Արտաշատի մոտ «որսի ժամանակ Մեծամորի կամուրջի տակ խեղդվում է գետում» (էջ 51, Մոսկվա, 1861 թ.)։

Արտաշատ քաղաքի մոտ Մեծամորի վրա շինված կամուրջի մասին հայտնում է նաև Սեբեոսը, միայն հարկավոր է նկատի ունենալ, որ 7-րդ դարում Սեբեոսի ժամանակ Արտաշատ քաղաքն այլևս գոյություն չուներ և նրա նախկին դռների մոտ շինված կամուրջով ճանապարհն անցնում էր ուղղակի դեպի Դվին։ Խոսելով արաբների առաջին մեծ արշավանքի մասին (640 թ. աշնան) և հայտնելով, որ նրանք Կոգովիտով իջնում են Այրարատյան հովիտը, նա ավելացնում է, թե «հայոց զորականներից ոչ ոք չկարողացավ տխուր լուրը Դվին հասցնել, բացի երեք իշխաններից, որոնք գնում էին ժողովելու ցրված զորքը՝ Թեոդորոս Վահևունին, Խաչյան Առավեղյան և Շապուհ Ամատունին, որոնք, իբրև փախստական, Դվին գալով և հասնելով Մեծամորի կամրջին, ավերում են (այն) և իրենք անցնելով՝ տխուր լուրը հասցնում են ավանը» (Դվինը)։ Արաբները հասնում են «Մեծամորի կամրջին, բայց չեն կարողանում անցնել». շարունակության մեջ Սեբեոսն այլևս չի հայտնում, թե արաբներն ինչպես են անցնում Մեծամորին,—արդյոք ավերված կամուրջը նորոգում են, թե՞ ծանծաղուտով են անցնում, միայն նա ավելացնում է, թե արաբներին առաջնորդում է Մոկաց Վարդիկ իշխանը, և նրանք անցնելով գետը՝ հարձակվում են Դվինի արվարձանի վրա (Գ. դպ., գլ. Լ., էջ 175, Թիֆլիս, 1912)։ Պատմագրական վերոհիշյալ տեղեկությունների հիման վրա Ինճիճյանը (Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 487) ենթադրում է մինչև իսկ, որ Մեծամորի վրա երկու կամուրջ էր շինված՝ մեկը Վաղարշապատի և մյուսն Արտաշատի անունով, որ դժվար թե ընդունելի լինի։

Այսպիսով՝ պատմական աղբյուրների հաղորդած տեղեկությունները հաստատում են, որ Մեծամորը կամ Սև-ջուրը հասնում էր մինչև Դվինի դաշտը և Արտաշատ մայրաքաղաքի մոտ խառնվում Երասխին։ Սակայն այստեղ մի լուրջ հարց է առաջանում. Զանգի կամ Հրազդան գետի ստորին հոսանքն անցնում է Մեծամորի ու Արտաշատ մայրաքաղաքի միջև ընկած տարածությամբ և խառնվում է Երասխ գետին, հետևապես Մեծամորն առանց Զանգուի հետ միանալու չէր կարող հասնել մինչև Արտաշատ կամ Դվինի դաշտավայրը. այդ դժվարությունն իր ժամանակ զգացել է նաև Ղ. Ալիշանը, որն «Այրարատի» մեջ գրում է, թե Մեծամորը, ինչպես և Այրարատյան դաշտի ուրիշ գետեր, ենթակա են եղել իրենց ընթացքի փոփոխման, ապա նա ավելացնում է, թե Մեծամորը Արտաշատի մոտ Երասխը թափվելու համար պիտի Երասխին զուգընթաց հոսեր դեպի

արևելք, ճանապարհին ընդունելով Քասաղը, Հրազդանը (Զանգին) և Ազատը, որից հետո միայն նա կարող էր թափվել Երասխը (Այրարատ, էջ 398)։ Իհարկե, Ղ. Ալիշանին շատ լավ հայտնի էր Մեծամորի (Սև-Ջրի) և Քասաղի խառնվելը միմյանց, սակայն նրան հայտնի չէր Մեծամորի ու Հրազդանի (Զանգուի) միմյանց հետ միանալու հանգամանքը և Երասխի ձախակողմյան ափերով, նրան զուգահեռ ձգված գետի նախկին հունի հետքերը. այդ պատճառով, առանց վերջնական կարծիք հայտնելու, ավելացնում է միայն, թե այս խնդիրն ավելի լավ ստուգելու համար հարկավոր է տեղն ու տեղը քննել այդ վայրերի գետերի հին ու նոր հունները և նրանցից վերցրած անունները։

Անհրաժեշտ է նախ և առաջ շեշտել մի հանգամանք, որ Երասխի ձախակողմյան վտակները լեռներից իջնելով Այրարատյան հարթավայրը՝ իրենց ստորին հոսանքում ավելի դանդաղ են հոսում, նրանք չունեն նաև խոր հուն, որովհետև ոռոգման համար նրանցից վերցրած ջրանցքների շնորհիվ պակասում են այդ վտակների ստորին հոսանքների ջրերը և իջնում է նրանց թափի ուժգնությունը, նույնիսկ այդ վտակներից մի քանիսի ջրերն ամառ ժամանակ Երասխին չեն հասնում և նրանց ստորին հոսանքը ցամաքում է։

Զանդի գետն ևս ենթակա է եղել նույն վիճակին, նրա ստորին հոսանքը Երասխի մոտ շրջանում համարյա թե գետնի երեսին հավասար է և այստեղ է միայն, որ Մեծամորը (Սև-Ջուրը) կարող է խառնվել նրա հետ և ընթանալ դեպի Արտաշատ։

Մեծամորի (Սև-Ջուր) և Զանգուի միմյանց հետ միանալու մասին խիստ կարևոր և հետաքրքրական տեղեկություն է տալիս Մ. Խորենացին, որ աննկատելի է մնացել մինչև այժմ բանասերների կողմից։ Պատմելով Վաղարշակ թագավորի (ըստ Մ. Խորենացու՝ Արշակունյան հարստության հիմնադրի) Հայաստանի արևմտյան և հյուսիսային կողմերը կարգավորելու մասին, Մ. Խորենացին ավելացնում է, թե երբ ձմեռը վրա է հասնում, Վաղարշակը Բասյանից վերադառնում է մեծ դաշտը (Այրարատյան) և «բանակ է դնում մեծ մորի ափին, այնտեղ, ուր մեծ գետը հյուսիսային ծովակից սկիզբ առնելով՝ իջնում և խառնվում է մեծ մորի հետ» (Մ. Խոր., Բ. գիրք, Զ. գլ., էջ 108—109, Տփղ., 1913 թ.)։ Այստեղ հիշատակվող մեծ մորը—Մեծամոր (Սև-Ջուր) գետն է, հյուսիսային ծովակը պատմական գրականության մեջ գործ է ածվել Սևանի լճի համար, իսկ այդ ծովակից սկիզբ առնող միակ «մեծ-գետը» Զանգին միայն կարող է լինել, հետևապես Մեծամորը (Սև-Ջուրը) և Զանգին Այրարատյան դաշտում մի ժամանակ խառնվել են միմյանց։ Մեծամորի (Սև-Ջրի) ստորին հոսանքը ջրերի կողմից ավելի հարուստ է, քան Զանգուն, հետևապես նա միանալով Զանգուի հետ՝ շարունակել է Երասխին զուգահեռ հոսել մինչև Դվինի շրջանը և Արտաշատ մայրաքաղաքի մոտերը թափվել Երասխը։ Ներկայումս Մեծամորը (Սև-Ջուր) Արտաշատից կամ Խոր Վիրապի շրջանից բավական հեռու, դեպի արևմտյան կողմը, Մամեդարագ գյուղի մոտն է թափվում Երասխը, նա չի միանում այլևս Զանգուի հետ, որը նրանից արևելք, Սարաջալար գյուղի մերձակայքում է խառնվում Երասխին։ Մեծամորի (Սև-Ջրի)

հոսանքի ուղղությունից երևում է, որ այդ գետը Թուրքմանլու կոչված գյուղից քիչ վերը միանալով Խասաղ գետին և ցած իջնելով՝ միաժամանակ խառնվել է Զանգուի հետ, ապա շարունակելով իր ընթացքը Երասխին զուգահեռ, տեղ-տեղ մոտեցել է նրան կես կիլոմետրից ավելի պակաս տարածությամբ և երբեմն էլ հեռացել է նրանից համեմատաբար փոքր չափով, այս եղանակով նախկին դարերում նա հասել է Արտաշատ մայրաքաղաքի մոտ։ Մինչև այժմ էլ այդ ուղղությամբ կարելի է նկատել Երասխի ձախ ափերին զուգահեռ հին գետի հուն, որը կարող է լինել միմիայն Մեծամորի (Սև-Ջրի) նախկին հոսանքի ճանապարհը։



Թե ե՞րբ է տեղի ունեցել Մեծամորի (Սև-Ջրի) սաորին հոսանքի փոփոխությունը կամ ներկա դեպքում Երասխն է թեքել իր ընթացքը դեպի հյուսիս, թե՞ Մեծամորն է փոխել իր հոսանքը դեպի հարավ, այդ մասին պատմագրական տեղեկությունները պակասում են։ Սակայն Մեծամորի (Սև-Ջրի) Երասխին խառնվելու վայրի ներկա տեղագրությունից ելնելով, հաստատապես կարելի է ասել, որ Երասխն այս շրջանում մի քանի ընդարձակ ոլորապտույտներ կազմելով և թեքելով իր հոսանքը դեպի հյուսիս, կամ իր ձախ ափերի կողմը՝ միացել է իրեն զուգընթաց հոսող Մեծամորի (Սև-Ջրի) հետ։

Այսպիսով՝ միանգամայն ճշտվում են նախկին դարերում (2-րդ դար մեր թվակ. առաջ մինչև 7-րդ դար մեր թվակ.) Մեծամորի (Սև-ջրի) Արտաշատ քաղաքի մոտ երասխին խառնվելու տեղեկությունները, որ հայտնում են Մ. Խորենացին և Փ. Բյուզանդը, ինչպես նաև հաստատվում են Ագաթանգեղոսի, Ծնբեոսի և Վարդան պատմիչի վկայությունները Արտաշատ քաղաքի մոտ Մեծամորի վրա շինված կամուրջի վերաբերյալ։